« Ցղեաց առ նա զերկուս 'ի Լատին կրօնաւորաց, հարցանել զողջունէ նորա և ասել, բարեաւ եկիր աղաւնի քաղցր շղարեր ոստոյ ձիթենւոյ։ Եւ նորա մեծարեալ զնոսա, դարձոյց պատուով՝ և արար պատասխանի առ Դեսպանն ասելով՝ հիւանդն զի՞նչ խնդրէ՝ եթէ ոչ՝ առողջութիւն, նեղեալն զի՞նչ, բայց միայն մխիթարութիւն »։ Պատմ. Հայոց. Հաց. Գ. Երես 811։ Դեսպանն արար կոչունս (Յունվար 24) և հրաւիրեաց զերկոսին Պատրիարքունս, զԳրիգոր և զՅովհաննէս՝ հանդերձ երեւելի իշխանօք, և պատուով մեծարեաց զնոսա, և ապա ետ նոցա ընծայս, ըստ Հայր Մ. Չամչեան, երկու ոսկի ժամացոյցս, մին Գրիգորի և միւսն Յովհաննու, և մեկնեցան անտի խաղաղութեամբ։ Իսկ Գրիգոր Պատրիարք փոխարէն ընծայից Դեսպանին տայ երկու գոհարազարդ մատանիս՝ մին տիկնոջ եւ միւսն որդւոյն։ Եւ ապա յաւուրս Բարեկենդանի մեծի պահոց՝ վերստին անկաւ 'ի մահիճս. այլ 'ի դարմանելոյ բժշկաց եգիտ զառողջութիւն և փութաց հիւանդադին յեկեղեցի Ս. Աստուածածնի՝ բառնալ զդժոխութիւնս՝ որ 'ի պատճառս չնչին իրաց անկեալ էր 'ի մէջ Պատրիարքին Յովհաննու եւ Անթապցի Պետրոս վարդապետի՝ Բիւթիւր կոչեցեալ՝ Նաւիրակին Էջմիածնի. թէպէտեւ հաշտեցան նոքա առ երեսս, բայց միսան եղեւ միջնորդին։ Գուժեաց յանկարծ 'ի թագաւորեալ քաղաքի անդ մահ Աբրահամու Կաթուղիկոսի Էջմիածնի՝ որ էր 'ի Թէքիրտաղէ, վախճանեալ 'ի Նոր կիւրակէի (1737. 'ի 18 Ապրիլի)։ Ի սմին ժամանակի եկեալ էին 'ի Կոստանդինուպոլիս Թովմայ և Մկրտիչ վարդապետք և այլք ոմանք. սոցա առեալ զնուիրակ Պետրոս վարդապետն՝ գնացին յիւսկիւտար առ Գրիգոր Պատրիարք. եկին անդ և Իշխանաւորք Կոստանդինուպոլսոյ, և եդին առաջի նորա թուղթ ինչ բաղմակնիք՝ յորում հրաւիրէին զնա գալ եւ նստիլ յԱթոռն Հայրապետական, եւ նորա խնդրեալ 'ի նոցանէ պայմանս խորհիլ մինչեւ ցաւուրս երիս, և արձակեաց զնոսա։ Ապա ասաց առանձին առ Յովհաննէս Պատրիարք և ցիշխանաւորս Հայոց, թէ այս երիցս անգամ եղեւ՝ խնդրեն զիս լինիլ Կաթուղիկոս ազգին, բայց անհնարին վարկուցեալ զիրսն հրաժարեցայ՝ և արդ դարձեալ հրաժարիմ։ Եւ զկնի երից աւուրց եկն յեկեղեցի